Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էքուիթի Էյ Էմ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին

հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի ղեկավար

21 ապրիլի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		64,818	561,332	974,350
Կարճաժակետ բանկային ավանդներ	4	226,533	388,802	325,128
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	5	55,683	1,686,928	2,313,003
Ածանցյալ ակտիվներ	6	113	521,506	832,679
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	7	435,021	363,653	277,896
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8	61,333	42,319	65,450
Այլ ակտիվներ		16,119	10,289	8,248
Հետաձգված հարկային ակտիվներ	9	10,385	-	1,538
Ընդամենը ակտիվներ		870,005	3,574,829	4,798,292
Պարտավորություններ				
Պայմանագրային պարտավորություններ	10	84,277	2,153,364	3,029,522
Ածանցյալ պարտավորություններ	6	200	404,052	800,683
Վարձակալության գծով պարտավորություն		22,016	4,553	27,715
Հաշվեգրված պարտավորություններ	11	59,003	55,334	45,656
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ		-	3,271	631
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	-	12,442	-
Ընդամենը պարտավորություններ		165,496	2,633,016	3,904,207
Կապիտալ և պահուստներ	12			
Բաժնետիրական կապիտալ		348,683	348,683	348,683
Վերագնահատման պահուստ		40,418	38,031	35,717
Պահուստային կապիտալ		-	-	1,111
Կուտակված շահույթ		315,408	555,099	508,574
		704,509	941,813	894,085
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		870,005	3,574,829	4,798,292

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 21 ապրիլի 2023թ.:

Արտակ Նահապետյան
Գործադիր տնօրեն

Գայանե Հովհաննիսյան
Ֆինանսական վարչության ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ բրոքերային և այլ ծառայություններից	13	230,310	404,689
Տոկոսային եկամուտ	14	46,647	36,259
Ածանցյալ գործիքների իրական արժեքով վերաչափումից օգուտ, զուտ		-	98,636
		276,957	539,584
Միջնորդավճարների գծով ծախսեր	15	(4,409)	(54,328)
Հատուցումներ աշխատակիցներին		(265,168)	(244,122)
Մաշվածություն և ամորտիզացիա		(30,017)	(27,982)
Ֆինանսական ծախսեր		(1,244)	(1,167)
Այլ ծախսեր	16	(118,199)	(71,146)
Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ	17	(118,051)	(70,932)
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(260,131)	69,907
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	18	22,827	(22,178)
Տարվա շահույթ/(վնաս)		(237,304)	47,729
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(237,304)	47,729

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Վերագնա-հատման պահուստ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	348,683	35,717	1,111	508,573	894,084
Տարվա շահույթ	-	-	-	47,729	47,729
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	47,729	47,729
Վերագնահատված պահուստի փոխանցում կուտակված շահույթին	-	2,314	-	(2,314)	-
Կուտակված շահույթի փոխանցում պահուստային կապիտալին	-	-	(1,111)	1,111	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	348,683	38,031	-	555,099	941,813
Տարվա վնաս	-	-	-	(237,304)	(237,304)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(237,304)	(237,304)
Կուտակված շահույթի փոխանցում պահուստային կապիտալին	-	2,387		(2,387)	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	348,683	40,418	-	315,408	704,509

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,426,409	1,537,376
Խորհրդատվածան ծառայություններից մուտքեր	161,311	10,640
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ	(1,651,996)	(1,396,794)
Աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ աշխատակիցներին	(257,308)	(229,809)
Հարթակի պահպանման վճարներ	(36,982)	(22,967)
Վճարված հարկեր և տուրքեր	(21,139)	(12,936)
Զուտ այլ վճարումներ	(53,989)	(40,050)
	(433,694)	(154,540)
Վճարված շահութահարկ	(10,231)	(7,394)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(443,925)	(161,934)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Արժեթղթերում ներդրումներից մուտքեր	10,664	5,193
Ներդրումներ արժեթղթերում	(120,435)	(108,757)
Ստացված տոկոսային եկամուտ	(23,507)	30,668
Հիմնական միջոցների ձեռքբերում	(8,484)	(5,229)
Զուտ շարժ բանկային ավանդներում	188,435	(72,203)
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	46,673	(150,328)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության պարտավորության մարում	(22,302)	(24,329)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(22,302)	(24,329)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(419,554)	(336,591)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(76,960)	(76,427)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում	561,332	974,350
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	64,818	561,332

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 43-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Էքուիթի Էյ Էմ» փակ բաժնետիրական ընկերությունը («Ընկերություն») հիմնադրվել է 2012թ. հուլիսի 10-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ թիվ 11 գրանցման համարով: Ընկերությունը գործունեություն է ծավալում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից 2012թ. հուլիսի 10-ին տրված «Ներդրումային ծառայությունների մատուցման մասին» թիվ 0011 լիցենզիայի հիման վրա: Ընկերության գործառնական ընթացակարգերը համապատասխանեցված են ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով սահմանված պահանջներին:

Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը,
- իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը,
- Ոչ հիմնական ծառայությունների գծով խորհրդատվական ծառայությունների մատուցում:

2018թ. Ընկերությունը նաև ձեռք է բերել «իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման» լիցենզիա:

Ընկերությունը մասնագիտանում է ֆորեքսի և ածանցյալ գործիքների շուկայի առցանց առևտրում՝ համապատասխան ծառայություններ առաջարկելով պրոֆեսիոնալ և ինստիտուցիոնալ հաճախորդներին: Ընկերությունն իր հաճախորդներին առաջարկում է առևտրի՝ աշխարհի հանրաճանաչ հարթակներից մեկը՝ MetaTrader 4 («MT4»): MT4-ը առևտրային ամբողջական փաթեթ է առաջարկում՝ թրեյդերներին մեկ հարթակից առևտրային բազմաթիվ շուկաներ մուտք գործելու հնարավորությամբ, որոնցից յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս իրական ժամանակով հետևելու աղյուսակներին, նորություններին, իրադարձություններին և լրակազմ անալիտիկ գործիքներին:

Ընկերությունը վերահսկվում է «Էքուիթի Գրուփ ԼԹԴ» ընկերության կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: «Էքուիթի Գրուփ ԼԹԴ» ընկերությունը գրանցված է Սենթ Հելիերում՝ Ջերսի և վերահսկվում է հիմնական բաժնետեր Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից: Ընկերության պետական գրանցման համարն է՝ 7216039:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2022թ. կազմել է 16 մարդ (2021թ.՝ 16 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան փող. 26/1, սենյակ 609:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ

կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով կամ իրական արժեքներով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է

Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 20-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2022թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ., էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 3	*Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 16	*Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 37	*Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	*2018-2021թ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և Գործնական կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*

2.6 Ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Ընկերությունը կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները և իրականացնում է նախորդ տարիների սխալների ուղղումը հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո թողարկման համար հայտարարված ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթում՝ վերահաշվարկելով ներկայացված նախորդող ժամանակաշրջանների համեմատելի այն գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ եթե սխալը տեղի է ունեցել նախքան ամենավաղ ներկայացված ժամանակաշրջանը, այդ դեպքում՝ վերահաշվարկելով ներկայացված ամենավաղ նախորդող ժամանակաշրջանի համար ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ

տարիների համադրելի տեղեկատվությունը, ներկայացված են այնպես, կարծես ուղղումը կատարվել է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում առաջացել է դրա կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, յուրաքանչյուր ներկայացված ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը վերագրվում է այդ տարվա ֆինանսական տեղեկատվությանը:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 480.14 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 542.61 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հոդվածները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային սարքավորումներ	-	1 -3 տարի
Արտադրատնտեսական գույք	-	8 տարի

Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումներն ամորտիզացվում են վարձակալության պայմանագրի ժամկետի ընթացքում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերաչափում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, բանկային ավանդները, պարտատոմսերը, տրված վարկերը և առևտրային դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ի լրումն, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Այս կատեգորիայի ակտիվները ներառում են գների տարբերության պայմանագրերը և դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ: Դրանք այն ածանցյալ գործիքներն են որոնք՝

- մոտակա ժամկետում վաճառքի կամ վերավաճառքի նպատակով են ձեռք բերվել կամ առաջացել,
- ֆինանսական գործիքների ճանաչված պորտֆելի մի մասն են, որն Ընկերությունը միասին է տնօրինում և ունի կարճաժամկետ շահույթի ստացման վերջին փաստացի օրինակը,
- նախատեսված և արդյունավետ չեն որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»: Նոր պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Ընկերության՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»)։

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ։

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար։ Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են հաճախորդներին վերադարձման ենթակա գումարները, առևտրային կրեդիտորական պարտքերը, վարձակալության գծով պարտավորությունները և ածանցյալ ֆինանսական գործիքները։

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով և, որտեղ կիրառելի է, ճշգրտվում են գործարքային ծախսերի համար, եթե գործիքը չի դասակարգվել որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով։

Հետագայում ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով նախատեսված ածանցյալ գործիքների և ֆինանանսական պարտավորությունների, որոնք հետագայում հաշվառվում են իրական արժեքով շահույթում կամ վնասում ճանաչված օգուտներով և վնասներով (բացառությամբ այն ածանցյալ ֆինանսական գրոծիքների, որոնք նախատեսված և արդյունավետ են որպես հեջավորան գործիքներ)։

Շահույթում և վնասում գրանցված տոկոսադրույքի հետ կապված բոլոր ծախսերը ներառվում են ֆինանսական ծախսերում կամ ֆինանսական եկամուտում։

Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով ֆինանսական պարտավորությունները ներառում են գների տարբերության պայմանագրերը, որոնք դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ։

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ածանցյալ ֆինանսական գործիքներ, որոնք չեն նախատեսված որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 9-ում։

Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 21.2-ում։

3.7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին։

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Ընկերությունը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.8 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Վերագնահատման պահուստը ներառում է հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներն ու վնասները:

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները

չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցում են ծառայություններ, Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրային զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը հիմնականում առաջանում է՝

- միջնորդավճարներից և այլ վճարներից,
- խորհրդատվական ծառայություններից:

Միջնորդավճարները գանձվում են այն արժույթով, որով բացված է հաճախորդի հաշիվը: Միջնորդավճարները գանձվում են դիրքի բացման ժամանակ, իսկ սվոփ դրույքները հաշվարկվում են ամեն օր՝ կախված դիրքից:

Խորհրդատվական և SS ծառայություններից հասույթ

Խորհրդատվական և SS ծառայություններից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա:

Տոկոսներից եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը:

4 Կարճաժամկետ բանկային ավանդներ

Հազար դրամ			2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Արժույթ	Տոկոսա-դրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
«Արարատբանկ» ԲԲԸ	ԱՄՆ դոլար	4.3%	88,553	109
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	9.3%	50,000	2,984
«Ինեկոբանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	7.5%	50,000	3,061
«Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	9.45%	30,000	1,826
			218,553	7,980

Հազար դրամ			2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Արժույթ	Տոկոսա-դրույք	Մայր գումար	Հաշվեգրված տոկոս
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ԱՄՆ դոլար	5%	115,235	2,806
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	9.5%	150,000	6,714
«Ինեկոբանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	7.5%	50,000	462
«Հայբիզնեսբանկ» ԲԲԸ	ՀՀ դրամ	8.8%-9.5%	60,000	3,585
			375,235	13,567

5 Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Միջնորդների մոտ պահվող գումարներ	55,683	-
Հաճախորդներից վերադարձման ենթակա գումարներ	-	1,686,928
	55,683	1,686,928

Ընկերությունը ընթացիկ տարվա ընթացքում իր հետ փոխկապակցված ընկերության՝ Էքուիթի Քեփիտալ ՅուՔեյ Լիմիթեդ միջոցով իրականացվել է Blue Isle Markets Inc.-ի 2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա 3,513 հազար ԱՄՆ դոլար դեբիտորական պարտքի մարումը՝ համաձայն 27 հունիսի 2022թ. Էքուիթի Քեփիտալ ՅուՔեյ Լիմիթեդ և Էքուիթի Էյ ԷՄ

ՓԲԸ ընկերությունների միջև կնքված Պահանջի զիջման պայմանագրով սահմանված կարգավորումների:

Տե՛ս ծանոթագրություն 22՝ հաճախորդներից և միջնորդներից վերադարձման ենթակա գումարների արժույթների բացահայտման համար:

6 Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են տարեվերջում դրական և բացասական դիրքով գների տարբերության պայմանագրերի (CFDs) վերջնական մնացորդների գծով օգուտներն ու վնասները:

7 Ամորտիզացված արժեքով ներդրումներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություններ կապակցված կողմերին	198,820	242,536
Ներդրումներ արժեթղթերում	241,206	127,223
Կորստի գծով պահուստ	(5,005)	(6,106)
	435,021	363,653

Ընկերությունը փոխառություն է տրամադրել ԱՄԷ-ում գրանցված «Ի Ջի Էմ Մարքեթինգ Մենեջմենթ» ՍՊԸ-ին (կապակցված կողմ):

Տրամադրված փոխառությունը 500,000 ԱՄՆ դոլար է և կրում է տարեկան 5% տոկոսադրույք, որը ենթակա է վճարման ամեն տարի: Մայր գումարը ենթակա է վճարման փոխառության ժամկետի ավարտին, որը յուրաքանչյուր տարի երկարաձգվում է մեկ տարով:

Արժեթղթերում ներդրումների մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտատոմսեր	Թիվ	Անվնակ ան արժեքը	Արժույթ	Կտրոնի տոկոսա դրույքը	Մարման ժամկետ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Ամերիաբանկ» ՓԲԸ	700	100	ԱՄՆ դոլար	4.75%	2023թ. մայիս	27,752
«Ամերիաբանկ» ՓԲԸ	720	100,000	ՀՀ դրամ	9.75%	2024թ. փետրվար	72,813
«Ֆինքա» ՈՒՎԿ	2,000	10,000	ՀՀ դրամ	13.00%	2024թ. նոյեմբեր	20,317
«Ֆինքա» ՈՒՎԿ	2,000	25	ԱՄՆ դոլար	6.50%	2024թ. հունիս	19,715
«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ	500	100	ԱՄՆ դոլար	6.25%	2024թ. հուլիս	19,944
						160,541

Պարտատոմսեր	Թիվ	Անվնակ ան արժեքը	Արժույթ	Կտրոնի տոկոսա դրույքը	Մարման ժամկետ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենայի ն կոմբինատ» ՓԲԸ	200	100,000	ՀՀ դրամ	11%	2022թ. սեպտեմ-բեր	20,552
«Ամերիաբանկ» ՓԲԸ	720	100,000	ՀՀ դրամ	9.75%	2024թ. փետրվար	72,815
«Ամերիաբանկ» ՓԲԸ	700	100	ԱՄՆ դոլար	4.75%	2023թ. մայիս	33,856
						127,223

Պարտատոմսեր	Անվանա-կան արժեք	Պայման ագրային արժեք	Արժույթ	Եկամտ աբերութ յան տոկոսա դրույքը	Մարման ժամկետ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գանձապետական պարտատոմսեր	35,000	33,055	ՀՀ դրամ	11.27%	2023թ. մայիս	33,723
Գանձապետական պարտատոմսեր	50,000	45,962	ՀՀ դրամ	11.06%	2023թ. հուլիս	46,942
						80,665

8 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Գրասենյակային գույք, համակարգչային տեխնիկա	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	62,607	66,576	794	129,977
Ավելացում	5,229	-	-	5,229
Օտարում	(660)	-	-	(660)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	67,176	66,576	794	134,546
Ավելացում	8,484	40,548	-	49,032
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	75,660	107,124	794	183,578
Կուտակված մաշվածություն				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	30,740	33,288	499	64,527
Տարվա հաշվարկ	5,429	22,192	79	27,700
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,169	55,480	578	92,227
Տարվա հաշվարկ	7,257	22,681	80	30,018
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	43,426	78,161	658	122,245
Հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,007	11,096	216	42,319
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32,234	28,963	136	61,333

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառում են գրասենյակային տարածքի վարձակալությունը: Ընկերությունը գրասենյակային տարածք է վարձակալում «Էրեբունի Պլազա»-ում, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1 հասցեում: Ընկերությունը գրասենյակային տարածքը, վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ծախսումների հետ միասին ճանաչել է օգտագործման իրավունքով ակտիվ և մաշվածություն է հաշվարկել վարձակալության ժամկետի ընթացքում, որը կազմում է 3 տարի: Ընթացիկ տարում պայմանագիրը երկարաձգվել է ևս երկու տարի ժամկետով: Համապատասխան պարտավորությունը ներկայացված է «վարձակալական պարտավորություններ» հոդվածի ներքո:

9 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	(12,442)	1,538
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս/(փոխհատուցում)	22,827	(13,980)
Տարեվերջի մնացորդ	10,385	(12,442)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ածանցյալ պարտավորություններ	72,729	(72,729)	-
Հաշվեգրված ծախսեր	8,700	(489)	8,211
Վարձակալության գծով պարտավորություններ	-	3,963	3,963
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	-	901	901
Հարկային վնաս	-	2,523	2,523
	81,429	(65,831)	15,598
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	5,213	5,213
Ածանցյալ ակտիվներ	93,871	(93,871)	-
	93,871	(88,658)	5,213
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(12,442)	22,827	10,385

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2021թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ածանցյալ պարտավորություններ	144,123	(71,394)	72,729
Հաշվեգրված ծախսեր	7,297	1,403	8,700
	151,420	(69,991)	81,429

Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ածանցյալ ակտիվներ	149,882	(56,011)	93,871
	149,882	(56,011)	93,871
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	1,538	(13,980)	(12,442)

10 Պայմանագրային պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին վերադարձման ենթակա գումարներ	84,477	1,235,656
Միջնորդներին վերադարձման ենթակա գումարներ	-	917,708
	84,477	2,153,364

Հաճախորդներին վերադարձման ենթակա գումարները ներկայացնում են հաճախորդների այն դեպոզիտները, որոնք ճշգրտվում են դրանց առևտրային շահույթի և վնասի, ինչպես նաև միջնորդավճարների չափով:

Տե՛ս ծանոթագրություն 22՝ հաճախորդներին և միջնորդներին վերադարձման ենթակա գումարների արժույթների բացահայտման համար:

11 Հաշվեգրված պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ աշխատակիցներին	41,130	47,506
Մասնագիտական ծառայություններ	3,657	2,007
Հարկեր և տուրքեր	1,880	2,499
Այլ	12,336	3,322
	59,003	55,334

Աշխատակիցներին հաշվեգրված պարտավորությունները ներառում են հաշվեգրված պարգևավճարները 14,352 հազար դրամի (2021թ. դեկտեմբերի 31՝ 25,397 հազար դրամ):

12 Կապիտալ և պահուստներ

12.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2022թ.	Սովորական բաժնետոմսեր 2021թ.
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 414.96 դրամ	840,280	840,280

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

12.2 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ, համաձայն որի Ընկերությունն իր կուտակված շահույթից պարտավոր է ստեղծել պահուստ՝ բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ի չափով:

13 Բրոքերային և այլ ծառայություններից հասույթ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ		
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարներ	22,764	147,874
SS ծառայություններից հասույթ	157,548	-
Խորհրդատվական ծառայություններից հասույթ	2,515	8,098
Այլ		
Բրոքերային սվոփից հասույթ	47,483	248,717
	230,310	404,689

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

14 Տոկոսային եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	22,467	17,457
Կապակցված կողմերին փոխառություններից եկամուտ	10,748	12,542
Արժեթղթերում ներդրումներից եկամուտ	13,432	6,234
Բանկային մնացորդներից տոկոսային եկամուտ	-	26
	46,647	36,259

15 Միջնորդավճարների գծով ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բրոքերային ծառայությունների միջնորդավճարների գծով ծախսեր	4,250	53,724
Այլ	159	604
	4,409	54,328

16 Այլ ծախսեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տեխնիկական սպասարկում	38,624	27,197
Չփոխհատուցվող հարկեր	34,911	18,247
Աուդիտ և խորհրդատվություն	13,471	3,723
Ապահովագրություն	15,514	5,330
Կոմունալ ծախսեր	2,714	2,563
Այլ	12,965	14,086
	118,199	71,146

17 Փոխարժեքային տարբերությունից վնաս, զուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(37,894)	79,408
Կարճաժամկետ բանկային ավանդներ	19,809	7,040
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	24,350	(74,677)
Ներդրումներ ամորտիզացված արժեքով	123,253	33,042
Պարտավորություններ		
Պայմանագրային պարտավորություններ	(11,338)	37,681
Հաշվեգրումներ	(129)	(11,562)
	118,051	70,932

18 Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	8,198
Հետաձգված հարկ	(22,827)	13,980
	(22,827)	22,178

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(260,131)		69,907	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2021թ.՝ 18%)	(46,824)	18.0	12,583	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	23,997	(9.2)	9,595	13.7
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	(22,827)	8.8	22,178	31.7

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ընկերության ֆինանսական ակտիվների կորուստների գծով պահուստ հաշվարկում է՝ հիմնվելով ֆինանսական պարտականությունները չկատարելու ռիսկի և սպասվող կորուստների գործակիցների վերաբերյալ ենթադրությունների վրա: Ընկերությունն այս

ենթադրություններն անելիս և արժեզրկման գործակիցները հաշվարկելու նպատակով դատողություններ է կիրառում՝ հիմնվելով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Ընկերության փորձի, ներկա շուկայական պայմանների, ինչպես նաև ապագային վերաբերող գնահատականների վրա:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների արժեքը հիմնված է ղեկավարության՝ վարձակալության ժամկետների գնահատականներից, ինչպես նաև լրացուցիչ փոխառության դրույքից, որն օգտագործվել է վարձակալության գծով վճարները զեղչելու համար: Այս վարձակալության ժամկետները համապատասխանում են պայմանագրի այն ժամանակաշրջանին, որը հնարավոր չէ չեղարկել, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը խելամտորեն վստահ է երկարացման տարբերակների օգտագործման մեջ: Վարձակալության ժամկետը գնահատելիս՝ ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր այն փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում Ընկերության համար վարձակալությունը երկարեցնելու տարբերակ կիրառելու նպատակով, ինչպիսիք են օրինակ՝ վարձակալության պայմանագիրը դադարեցնելու կամ նորը կնքելու ծախսերը:

Այս գործոններում փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ գնահատված վարձակալության ժամկետների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության գծով պարտավորությունների գրանցված արժեքի վրա:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	64,818	561,332
Կարճաժամկետ բանկային ավանդներ	226,533	388,802
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	55,683	1,686,928
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	435,021	363,653

Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ ակտիվներ	113	521,506
	782,168	3,522,221

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Պայմանագրային պարտավորություններ	84,277	2,153,364
Հաշվեգրված ծախսեր	55,942	52,835
Վարձակալության գծով պարտավորություններ	22,016	4,553
Իրական արժեք՝ շահույթի կամ վնասի միջոցով		
Ածանցյալ պարտավորություններ	200	404,052
	162,435	2,614,804

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արժութային ռիսկ պարունակող գործիքների հետ: Ընկերությունը նաև արտարժույթով արտահայտված ակտիվներ ունի: Արժույթի դիրքերը ներառում են արտարժույթով արտահայտված սեփական դրամական միջոցները, որոնք պահվում են օտար շուկաներում գործարքներ կնքելու նպատակով:

Ընկերությունն օգտագործում է հայկական դրամն արտարժութային փոխարժեքային ռիսկի վերլուծության համար: Ընկերությունը նվազեցնում է արտարժութային ռիսկը՝ շարունակաբար վերահսկելով արտարժույթի ազդեցությունը, համապատասխանեցնելով արտարժույթով ստացված դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, իսկ անհրաժեշտության դեպքում ուղղիչ միջոցառումներ է նախաձեռնում:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստեռլինգ
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,261	2,021	11,031
Կարճաժամկետ բանկային ավանդներ	88,662	-	-
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	49,520	6,117	46
Ածանցյալ ակտիվներ	113	-	-
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	257,000	-	(186)
	445,556	8,138	10,891
Ֆինանսական պարտավորություններ			
Պայմանագրային պարտավորություններ	84,126	1,062	(1,028)
Ածանցյալ պարտավորություններ	200	-	-
	84,326	1,062	(1,028)
	361,231	7,076	11,919

Հոդված

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ֆունտ ստեռլինգ	Ավստրալական դոլար
Ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	348,776	6,703	199,080	2,622
Կարճաժամկետ բանկային ավանդներ	118,041	-	-	-
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	1,686,928	-	-	-
Ածանցյալ ակտիվներ	210,257	-	311,034	215
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	270,286	-	-	-
	2,634,288	6,703	510,114	2,837

Ֆինանսական պարտավորություններ				
Պայմանագրային պարտավորություններ	1,997,500	(18,044)	129,618	7,410
Ածանցյալ պարտավորություններ	162,172	-	241,672	208
	2,159,672	(18,044)	371,290	7,618
	474,616	24,747	138,824	(4,781)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ համապատասխան արժույթի նկատմամբ դրամի 10% (2021թ.՝ 15%) աճին/նվազմանը: 10%-ը (2021թ.՝ 15%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2021թ.՝ 15%):

Դրամի արժևորումը համապատասխան արժույթի նկատմամբ 10%-ով (2021թ.՝ 15%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ

	2022թ.	2021թ.
ԱՄՆ դոլար	(36,123)	(71,192)
Եվրո	(708)	(3,712)
Ֆունտ ստեռլինգ	(1,192)	(20,824)
Ավստրալական դոլար	-	717

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեք		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	64,818	561,332
Կարճաժամկետ բանկային ավանդներ	226,533	388,802
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	55,683	1,686,928
Ածանցյալ ակտիվներ	113	521,506
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	435,021	363,653
	782,168	3,522,221

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարները երաշխավորված են Ընկերության նախկին բաժնետեր «Էքուիթի Քեփիթըլ Յու Քեյ Լիմիթեդ» ընկերության կողմից:

Վարկերի գծով պարտքայն ռիսկը համարվում է ընդունելի, քանի որ այն տրամադրվում է Ընկերության կապակցված կողմին: Վարկի գծով ճանաչված կորստի գծով պահուստը հիմնված է 12-ամսյա ակնկալվող կորստի վրա:

Ամորիտզացված արժեքով չափվող պարտատոմսերի մեջ Ընկերության ներդրումները ցածր պարտքային ռիսկ են պարունակում, քանի որ դրանք պահվում են բարձր վարկանիշ ունեցող գործընկերների մոտ և ֆինանսական հաստատություններում:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև հստակ առևտրային սահմանաչափեր սահմանելով իր հաճախորդների համար և ապահովելով հաճախորդի դիրքը փակելու իր ամրագրված իրավունքը՝ հաշիվը բացվելու ժամանակ հաճախորդի հետ համաձայնեցված ընդհանուր դրույթների և պայմանների միջոցով:

Իրացվելիության ռիսկը հիմնականում առաջանում է հաճախորդների կողմից արված դեպոզիտներից: Հաճախորդների ավանդների զգալի մասը փոխանցվում է միջնորդ բրոքերի, իսկ մնացյալը պահվում է առանձին, չօգտագործվող բանկային հաշվի վրա: Համաձայն հաճախորդների հետ պայմանագրի պայմանների՝ միջնորդ բրոքերի անվճարունակության դեպքում, Ընկերության միջոցները կարող են չբավարարել հաճախորդի պահանջները, և Ընկերությունը պարտավոր չի լինի ծածկել հաճախորդի կորուստները: Հետևաբար իրացվելիության ռիսկն աննշան է:

Հաշվեգրված ծախսերն ու վարձակալության գծով պարտավորությունները պայմանագրով ենթակա են մարման մեկ ամսվա ընթացքում:

22 Իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

22.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ընկերության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվության նպատակներով իրականացնում է ֆինանսական գործիքների գնահատում: Գնահատման տեխնիկաները ընտրվում են՝ հիմնվելով յուրաքանչյուր գործիքի բնութագրից, շուկայական տվյալների հիման վրա տեղեկության առավելագույնս արդյունավետ օգտագործման նպատակով: Ֆինանսական գործիքները գնահատելու առանձնահատուկ տեխնիկաները ներառում են՝

- բաց դիրքերի համար՝ հղում կատարելով ակտիվ շուկայի գործարքներին,
- այլ ֆինանսական գործիքների համար՝ դրամական միջոցների հոսքի զեղչման վերլուծություն:

Ընկերությունը ածանցյալ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգել է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակում:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց համար բացահայտված է իրական արժեքը

Միջնորդների մոտ պահվող գումարների հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Կապակցված կողմին վարկը տրամադրվել է «Ի Ջի Էմ Մարքեթինգ» ՍՊԸ-ին: Այն ունի մեկ տարի մարման ժամկետ և 5% (2021թ.՝ 5%) ֆիքսված տոկոսադրույք: Վարկի գնահատված իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: 198,820 հազար դրամ գումարը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը 5%-ով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Բանկային ավանդների և պարտատոմսերում ներդրումների հաշվեկշռային արժեքը համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում: Իրական արժեքի գնահատումը որոշվում է՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկման մոտեցումը: Իրական արժեքը գնահատվել է՝ զեղչելով պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը շուկայական

տոկոսադրույքով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է շուկայական տոկոսադրույքն է:

23 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից բաշխված բաժնետերերի միջև, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով, Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր, կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

Ընկերության ֆիանանսական լծակը հավասար է զրոյի, քանի որ Ընկերության կապիտալը կազմված է միայն սեփական կապիտալից (2021թ.՝ զրո):

23.1 Կապիտալի համարժեքություն

Ընկերության կապիտալի ռիսկի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Ընկերությունը ենթարկվում է արտաքին միջավայրից պարտադրված կապիտալի պահանջներին և որ Ընկերությունը պահպանում է ուժեղ պարտքային վարկանիշ և կապիտալի հարաբերակցություն՝ իր գործունեությունն ապահովելու և բաժնետոմսերի շուկայական արժեքի մեծացման համար:

ՀՀ ԿԲ-ը ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալի համար սահմանել է հետևյալ տնտեսական նորմատիվը.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվ
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափ	704,509	941,813	300,000
Բաժնետիրական կապիտալի նվազագույն չափ	348,683	348,683	1,000

24 Պայմանականություններ

24.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության

հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

25.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ն գործունեություն է ծավալում Սենթ Հելիերում՝ Ջերսի և չի պատրաստում հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ: «Էքուիթի Գրուփ» ԼԹԴ-ի բաժնետոմսերի մեծամասնությունը վերահսկվում է Աբդուլ Ռաուֆ Ալ Բիթարի կողմից:

25.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և այլ պարգևատրումներ	77,033	57,208
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Բրոքերային ծառայություններից միջնորդավճարների գծով ծախսեր	4,249	53,724
Ծառայությունների մատուցում	160,063	8,098
Միջնորդներին փոխանցված դրամական միջոցներ	1,109,776	1,396,794
Ծառայությունների ձեռքբերում	42,894	38,052

Հազար դրամ Մնացորդներ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Հաշվեգրված պարտավորություններ	12,652	14,245
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	198,820	236,430
Հաճախորդներից և միջնորդներից ստացման/(վերադարձման) ենթակա գումարներ	55,796	880,798
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,352	1,998
Ստացված կանխավճարներ	1,181	2,641

26 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

2022թ. ընթացքում Ընկերությունը նախորդ տարիներին վերաբերող սխալներ գտնելու արդյունքում որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»*: Վերոնշյալի արդյունքում, Ընկերության ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ հիմնվելով Ընկերության որդեգրած քաղաքականության վրա:

Ճշգրտումը առաջացել է միջնորդ գործընկերոջ հետ նախորդ տարիներին վերաբերող փոխադարձ հաշվարկների ճշգրտման արդյունքում:

26.1 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. հունվարի 1-ի դրությամբ վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունների համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	561,332	-	561,332
Կարճաժակետ բանկային ավանդներ	388,802	-	388,802
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	1,686,928	-	1,686,928
Ածանցյալ ակտիվներ	521,506	-	521,506
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	363,653	-	363,653
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	42,319	-	42,319
Այլ ակտիվներ	10,289	-	10,289
Ընդամենը ակտիվներ	3,574,829		3,574,829
Պարտավորություններ			
Պայմանագրային պարտավորություններ	2,116,484	36,880	2,153,364
Ածանցյալ պարտավորություններ	404,052	-	404,052
Վարձակալության գծով պարտավորություն	4,553	-	4,553
Հաշվեգրված պարտավորություններ	55,334	-	55,334
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	3,271	-	3,271
Հետաձգված հարկային պարտավորություններ	12,442	-	12,442
Ընդամենը պարտավորություններ	2,596,136		2,633,016
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	348,683	-	348,683
Պահուստային կապիտալ	38,031	-	38,031
Կուտակված շահույթ	591,979	(36,880)	555,099
	978,693		941,813
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	3,574,829		3,574,829

Հազար դրամ	2021թ. հունվարի 1-ի դրությամբ		
	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	974,350	-	974,350
Կարճաժակետ բանկային ավանդներ	325,128	-	325,128
Հաճախորդներից և միջնորդներից ստացման ենթակա գումարներ	2,349,882	(36,879)	2,313,003
Ածանցյալ ակտիվներ	832,679	-	832,679
Ամորտիզացված արժեքով ներդրումներ	277,896	-	277,896
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	65,450	-	65,450
Այլ ակտիվներ	8,248	-	8,248
Հետաձգված հարկային ակտիվներ	1,538	-	1,538
Ընդամենը ակտիվներ	4,835,171		4,798,292
Պարտավորություններ			
Պայմանագրային պարտավորություններ	3,029,522	-	3,029,522
Ածանցյալ պարտավորություններ	800,683	-	800,683
Վարձակալության գծով պարտավորություն	27,715	-	27,715
Հաշվեգրված պարտավորություններ	45,656	-	45,656
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	631	-	631
Ընդամենը պարտավորություններ	3,904,207		3,904,207
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	348,683	-	348,683
Պահուստային կապիտալ	35,717	-	35,717
Վերագնահատման պահուստ	1,111	-	1,111
Կուտակված շահույթ	545,453	(36,879)	508,574
	930,964		894,085
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	4,835,171		4,798,292